Հայտարարվում են մրցույթներ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի դասվարի (16 դասաժամ), հայոց լեզվի և գրականության (7 դասաժամ), մաթեմատիկայի (7 դասաժամ) և անգլերեն (10 դասաժամ), ուսուցչների թափուր տեղերի համար: Մրցույթներն անցկացվելու են երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվելու է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍ նախարարության մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույց անցկացնում առանձին: Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),

-մեկ լուսանկար 3×4 չափի,

-բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),

-անձը հաստատող փաստաթուղթ,

-«Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ի մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),

-ինքնակենսագրություն (Ձև 5),

-այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,

- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ ,

հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),

- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ, կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2024 թվականի սեպտեմբերի 2-ից սեպտեմբերի 13 -ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Դասվարի և մաթեմատիկայի ուսուցիչների թափուր տեղերի մրցույթները տեղի կունենան 2024 թվականի սեպտեմբերի 17-ին ժամը 14:00-ին, իսկ հայոց լեզվի և գրականության, անգլերենի ուսուցիչների թափուր տեղերի մրցույթները տեղի կունենան 2024 թվականի սեպտեմբերի 18-ին ժամը 14:00-ին ՀՀ Արմավիրի մարզի «Ոսկեհատի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ում:

Հասցեն՝ Վաղարշապատ համայնք, Ոսկեհատ բնակավայր,Մաշտոցի 1/4

Տեղեկությունների համար զանգահարել՝ (093) 18-59-23 հեռախոսահամարով: